

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ՌՈՒՍԱՏԱՆԻՑ

Մանրամասնութիւններ բարւոքման վարկի մասին։ Հողի բերքը, Փոխառության գնակերտը և գիւղական բանկերը Ռուսաստանում, Զեմստօւնների տւած փոխատութիւնները, Բարւոքման, Համաշնական ու քաղաքավին վարկի տեսակները Եւրոպակում, Ռուս քաղաքների, Համաշների և զեմստօնների դրամական վիճակները, Գլէբ Ռատինովի և Նրա կարծիքը ոռա մուժիկի մասին և ոռա ինտելիգենցիակի պարտաւորութիւնների մասին, Նոր գրքեր։

«Մուրճաբի ընթերցողները գիտեն արդէն բարւոքման վարկի (մելորացիոնալ կредիտ) ծրագրի<sup>1)</sup> մասին, Աւելորդ չենք համարում վերադառնալ այդ կարսոր խնդրին՝ հազորդելով մի քանի նոր մանրամասնութիւններ։ Այս մանրամասնութիւնները ներկալացնում է իւր աշխատութեան<sup>2)</sup> մէջ պ. Բլիսեր, որին լանձնած էր այս խնդրի ուսումնասիրութիւնը ներքին գործերի մինխարութեան կից կազմած և բարձրագործ հաստատւած լանձնաժողովի նախագահի կողմից։

Ականք համամատութիւններից։

Ռուսաստանում մի հեկտար<sup>3)</sup> հողը տալիս է 8 հեկտոլիտր ցորեն, մինչդեռ 9 եւրոպական պետութիւններում 16,7 հեկտոլիտր, Գրեթէ կը պնակի պակաս է ստացւում նաև ոռա գարին և հաճարը, խկուութը (ռօյշ) երեք անգամ պակաս է ստացւում, Նոյն իսկ Ֆինլանդիան, որը պակաս բարեր պէտք է համարել քան Ռուսաստանի մի քանի ներքին նահանգները, ամելի է արդիւնաբերում։

Մի փութից ստացւել է 1888 թվական։

Ֆինլանդիակում. Հաճար 7,1, ցորեն 7,7, գարի 5,7

Ռուսաստանում      "      5,6,      "      5,2,      "      3,5

<sup>1)</sup> «Մուրճ» № 7—8, էջ 1183—1186.

<sup>2)</sup> «Мелорациональный кредитъ и состояніе сельскаго хозяйства въ Россіи и иностраннѣхъ государствахъ—Барвւոքման վարկը և գիւղանստութեան դրութիւնը Ռուսաստանում և օտար պետութիւններում».

<sup>3)</sup> 16 Հեկտար=Յուսագրակէս 15 ոռա դիսեախնավի,

թող չը կարծի սական՝ թէ ալս համեմատութիւնից պէտք լինի եզրակացներ՝ թէ անհրաժեշտ է Ռուսաստանում էկստենսիւմչակութիւնից անցնել ինտենսիւմչակութեան. — ոչ, քանի որ Ռուսաստանում հողը ամելի էժան է և էկստենսիւմչակութիւնը կարող է աւելի ձեռնտու լինել, քան արևատական միջոցներով բերրիացնող ինտենսիւմ՝ <sup>1)</sup> մշակութիւնը.

Եւրոպակում բարոքման վարկը գլխաւորապէս ի նկատի ունի մոծ հոգագործներին, իսկ Ռուսաստանում դոքա պէտք է լինէին կալւածատէրերը, սական վիճակագրական թմբը գալիս են հաստատելու, որ սոքա իրանց հոգերը մեծ մասամբ կապարով են տալիս հողագուրկ գիւղացիներին և որ առհասարակ գնդուկների իրանց ձեռքում գտնուած հողերի 80% ալս մուժիկներն են մշակում, իսկ կալւածատէրերի հողերից մշակում է միան 46%, այս էլ վերոիշեալ ձեռփառութիւնը էլեկտրիկ օգտականի որ պետութիւնից շնորհած հոգերի արժէքը դեռ անվճար են թողել ամբողջովին կամ մասամբ, Գիւղացին չը պիտի կարողանաք օգտական նաև այն դէպքում, երբ նա պոմեշչիկի հողն է մշակում՝ պալմանով առած, Բայց՝ եթէ գիւղացին փողի կարուութիւն ունի <sup>2)</sup> նա տոկոսով պարտք է վերցնում թէ անհատապէս թէ համանքով, և առ հարիւրի չափը համառում է երբեմն 40, երբեմն 60 և երբեմն 400! Թէև օրէնքով գիւղացիները իրաւունք չունին գրաւ գնել տէրութիւնից ստացած հողերը, սական դոքա գրաւ են դրւած հէնց օրէնքի հակառակ, Առ գրաւ զնիելուց չետու գիւղացիները կապալով են վերցնում հէնց իրանց հողերը վճարելով դեսհատինալին 5 ոռոգլուց 9 ոռուրլի:

Սական չը պէտք է կարծել որ Ռուսաստանը բոլորովին զուրկ է վարկի անպիսի հաստատութիւններից, որոնք քիչ թէ շատ օգնէին գիւղացիներին,

Այդ տեսակ հաստատութիւնները Ռուսաստանում երկու տեսակի են, փոխատու-ինալողական ընկերութիւնները և գիւղական բանկերը,

Առաջին տեսակի հաստատութիւնները շատ էլ լարմար չեն աղքատ գիւղացու համար. <sup>3)</sup> այդ հաստատութիւնները ի նկատի ունին զլսաւորապէս փոքր ի շատէ ունենորներին, որտինեան փոխ ստանալու կարող է միմիակն նա՝ ով որ անդամակցում է ընկերութեանը իւր ինսալորդութիւններով. Ազ

<sup>1)</sup> Էկստենսիւմ մշակութիւն հողերի կոչում է եթէ ամելի ուշք է դարձնում նոր վարելանողերի մշակման, իսկ ինտենսիւմ երբ դիմում են արհեստական բերրիացման—աւելի առատ բերք ստանալու համար, առանց նոր վարելանողերի դիմելու, այլ միմիակն ունեցածը պարարտացնելուն.

<sup>2)</sup> «Մուրճ» № 7—8, էջ 1182.

<sup>3)</sup> Ռուսական ալս հաստատութիւնները ընդօրինակութիւններ են Շուլցէ-Դիելիչի գերմանական հաստատութիւններին, Շուլցէ-Դիլիչը գծադրել էր ալդ հաստատութիւնները քաղաքական բանւորների համար.

տեսակ հաստատութիւնները, —որոնց դիցուք մի ռուբլի վճարողը փոխ կարող է ստանալ 1 ռուբլու և ուսպատիկը —ալսպէս թէ աշնպէս ենթագում է անդամի ունենորութիւնը և իւր տեսակից շատ օգտակար կարող է համարել Պակով զաւառի ամս տեսակ ընկերութիւնը, որի անդամների թումն են գաւառի ընակիչների երեք քառորդը, առ. 1 լուն. 1888 փոխ էր տարել 3±0.000 ռուբլի՝ ունենալով նաև կանխիկ 90.000. Սարատով զաւառի նոյն տեսակ ընկերութիւնը փոխ էր տարել 1882 թ. 250.000 ռ., և անդամների թիւն էր 3.367՝ կէսը բոլոր անաստերերի. Մի քանիսը ամս տեսակ ընկերութիւններից իրանց օգուտներնից 600 ռուբլուց մինչև 2500 ռ. լատկացրել են ուստամարանների կառուցման համար:

Բայց որովհետեւ ուստ մուժիկը ընդհանրապէս չբաւոր է և զուրկ գրազիսութիւնից—ուր մնաց զանազան հաշիւնների հասկացողութիւնից—ուստի այդ տեսակ փոխատուխնակողական ընկերութիւնների թիւը ամբողջ Ռուսաստանում համնում է մինիալի 836.

Երկրորդ կարգի հաստատութիւնները, այն է գիւղական բանկերը, լարմար հող չը զանելով իրանց համար՝ մնացել են անգործադրելի և չը նաևած որ արդէն 6 տարի անցել է ալդ տեսակ հաստատութիւնների կանոնագրութիւնը հրատարակելուց՝ դեռ ոչ մի գիւղական բանկ չէ հիմնւել բայց որովհետեւ վարկի անհրաժեշտութիւնը անհրաժեշտ է եղել—մննք տեսնում ենք Ռուսաստանում վարդի ուրիշ ձմեռ Ակսակէս, զանազան զեմուտւներ բարի փոխատութիւններ են տակ զանազան նպատակների համար.

Մենցելնակի ղեմտուօն 1887 թ. փոխ է տարել 5.000 ձիեր առնելու համար ձիազուրկ գիւղացիններին ամեն մի առնելիք ձիուն 25 ռ. հաշւելով, վեստիգոնի զիմստուօն նոյն նպատակին էր լատկացրել 3.000 ռ.։ Մոսկվակի զիմստուօն ապասիկ ծախում է գիւղացիններին՝ ուցրել մերմեր և ալլն. ալս գործին Մոսկվակի զիմստուօն լատկացրել էր վերջին տարիները տասը-տասը հազար ռուբլի. Նոյն ուղղութեամբ և շատ լաջող կերպով գործում են Պերմի և Վեստկատի զիմստուօնները Մի քանի զիմստուօնները լանջն են առնել միջնորդի զերը գիւղացինների և երկրագործիքներ ծախողների մէջ, Զեմստուօն ստանում է երրամբ 30%/<sub>o</sub> միջնորդութիւն ծախողի կողմից, իսկ առնող գիւղացին պարատարում է վճարել երկու տարում գործիքի արժեքը.

Երպագալում բարւոքման վարկը կազմակերպած է տեսակ տեսակ ձևերով.

Բաւարիա և ալում գործում են Ռազմակերպական բանկերը (քոօպերատուաթ. ճ. յ) որոնք տալիս են նաև երկարամեալ փոխատութիւններ նաևած նպատակին, թէ տաւար ձեռք բերելու, թէ շինութիւններ կառուցանելու և թէ ալլ անտեսական գործների համար:

Բելգիա և ալում գործում են թէն մասնաւոր, բայց պատախանատու բանկեր, որոնք և բաժիններ են սինակողութեան գլխաւոր դրամարկու անաւած հաստատութեան:

Անգլիան—բարուքման վարկի միջոցով չորացրել է ահապին ճահճակին տարածութիւններ, որոնք նստել են մօտ 8 միլ. ֆունտ ստերլինգ։ միան թէ աղդ գումարը ծախսել է 32 տարւակ ընթացքում աղն է 1846-ից մինչև 1878 թ.։

Բաւարիակում—նշանակւած կալ ամեն մի վիճակի համար մաս ո՞ն ագէտ ինժիների պաշտօնը, որը ծանօթանալով իրան լանձնւած վիճակի հետ՝ ծը ագրում է անխպիսի նախագծեր—դիցուք մի կամուրջի շինութեան, մի ջրանցքի, որոնց շրորհիւ տեղացինների թէ հողերի գինը կաւելանար և թէ աւելի դիւրութիւններ և առաւելութիւններ կը ստեղծէմքը նոյն վիճակի համար։ Ազդպիսի մի նախագիծ կազմելուց իստու ինժիները աշխատում է համոզել հողատէրին, նթէ տոքա համաձայնում են մեծամասնութեամբ՝ աղդ ծրագրւած նախագծերը համարւում են հասարակական աշխատութիւններ—ապա ձեռք է բերւում նախագծւածի համեմատ անհրաժեշտ գումարը և ձեռնարկում շինութեան, նթէ ինժեները սկզբում իւր կողմը ունի փոքրամասնութիւնը՝ նա շարունակում է այնքան՝ մինչև որ կարողանում է ձեռք բերել ձախների առաւելութիւն դէպի իւր կողմը—կատարւում է վեր վիշտը և փոքրամասնութիւնը հպատակում է։

Վերադառնալով բարուքման վարկի ծրագրին՝ ամելացնենք որ աղդ գործին շատ կօգնեն արդէն գոլութիւն ունեցող տնտեսութեամբ (агрономический смотритель)՝ մի պաշտօն, որ շատ զեմտուներ սկսում են հաստատել իրանց մէջ նաև գիւղատնտեսութեամբ կերպէթիւնները, որոնց կարելի կը լինի լանձնել թէ նախաձեռնութիւնը անհրաժեշտ և օգտակար բարենորոգութիւնների ծրագրեր կազմելում, թէ վերահսկողութիւնները լինելիք հասարակական շինութիւնների կառուցման և աղն։ Մի բան սական շատ է աչքի ընկնում և որը կարող կը լինի բաւականաչափ կերպով խանգարել արդպիսի ձեռնարկութիւնների զլուխ գալը—ընթերցողը վիշտը է մեր անցեալ<sup>1)</sup> լոգւածից որ ամեն մի գործի լատկացնմալի գումարը՝ տրմելու է երեք մինիստրութիւնների (այն է պետական կալածների, ներքին գործների և ֆինանսների, մինիստրութիւնների) հաւանութիւնից և վճռից լետուք Ռիսաց մամուլի մի մասը իրաւացի է նկատում, որ այս ձեռականութիւնը միմիան շատ ժամանակ և շատ թուղթ կը խլի։

\* \* \*

Բարուքման վարկի հետ սաաց մամուլը միաժամանակ զրադւում է աղդ վարկի խնդիրներով. դոքա են՝ համալնական և քաղաքալին վարկը.

<sup>1)</sup> «Մուլթ» № 7-8, էջ 1185.

Ռուսց օրէնքների համաձայն զեմստօները և քաղաքները իրաւունք ունին մախել ընթացիկ ծալսսերի վրա այն գումարները որ իրանք ժողովում են տուրքի ձևով։ Սական այդ գումարները չեն գոհացնում այն դէպքերում երբ հարկ է լինում մի կամուրջ, մի հիւանդանոց, մի ջրանցք կառուցանելու, կամ մի աղետի դէմ, թէկուզ խոլերավի հետ, կռ.մելու համար։

Մեծ քաղաքները (Պետերբուրգ, Մոսկվա, Օդեսա, Վարշավա, Բիդա, Թիֆլիս և մի քանի ուրիշները) թուլուտվիւն ստանալուց լիտոյ իրաւունք և հնարաւորութիւն ունին փոխառութիւն անել ի վաճառ հանելով օրվացիաներ, բայց միւս մանր քաղաքների և ղեմստօների անելիք փոխառութիւնները դժւար թէզզուի գալու լինեն այդ քաղաքների անկատութեան պատճառով Ուստի ռուսց մամուլը անհրաժեշտ է համարում լատուկ այս նպատակի համար անպիսի մի հաստատութեան հիմնելը որը լատկապէս ծառակէր այդ գործին կամ թէ հէնց եղած բանկերը ի թիւ այլ գործողութիւնների նաև փոխառութիւններ տալին համարնքներին և քաղաքներին։

Կատարելով սոսկ քրոնիկագրրի պաշտօնը — հարկ չը կաէ դուրս գալու այս սահմաններից և մանել հարցի ուստամեսախութեան մէջ։ Ազգանը ասենք միան որ Եւրոպակոմ այս ինդիրը վազուց լուծւած է և որ համարնքները ու քաղաքները հեշտութիւններ ունին պարտքեր անելու հանրօգուտ գործերի համար։

Աւրոպան ներկաւացնում է բազմաթիւ խրատական և լուսադրող օրինակներ։

Բելգիակում գոլութիւն ունի Crédit Communal (Համայնքական քարկի ընկերութիւն) 1860 թ. հաստատած, հիմնելուց նա վճարում էր իւր պարտքերին — 5%, ներկալում ունի միապն 3% օրվացիաները։ 1891 թ. հաշիւններից երեսում է որ ընկերութիւնը իւր հաստատելու օրից փոխառութիւն է տեղ 1.478 բելգիական<sup>1)</sup> համարնքներին 142.457.300 ֆրանկ։ Փոխառութիւնների մեծամասնութիւնը (2412.՝ 2854 ընդհանուր գումարից) եղել են 1000—50.000 ֆրանկի, 232 փոխառութիւն ոչ աւել քան հարիւր հաղարի և 210 փոխառութիւն հարիւր հաղար ֆրանկից աւել գումարների։

Ընկերութեան դրամագլուխը է 6.610.400 — իսկ պահեստինը 7.304.087 ֆրանկ, Ընկերութիւնը բաժանել է իւր օգոստսներից համարնքների մէջ իւր գործունէութեան ժամանակամիջոցում 6.818.762 ֆրանկ իրը դիղենու<sup>2)</sup>։

Ֆրանսիական Crédit foncier հաստատութիւնը իւր գոլութեան ընթացքի 30 ամառում (1860—1890) ի վաճառ է հանել 3.011.845.700

<sup>1)</sup> Ամբողջ բելգիական համարնքների թիւը է 2600.

<sup>2)</sup> Դիլիդենսուան, օգոստա.

<sup>3)</sup> Kommunales Finanzwesen Յուանդը Schönbergs Handbuch'ի մէջ։

Փրանկի օրվեպացիաները Սրա երրորդ մասը—այն է առևլի քան մի միլիարդ Փրանկը փոխ է տրած զեպարտամենտներին, համայնքներին և սինդիկատներին առանց գրաւականի:

Վերջերս այս հաստատութեան հետ, Ֆրանսիակում, սկսել են մրցել ապահովագրութեան ընկերութիւնները և փոխ տալիս համայնքներին 4,25% և նույն խակ 4%:<sup>1)</sup>

Պ. Ռաբոցենտախ'ի<sup>1)</sup> վիճակագրական աղիսակներից երեսում է որ 1886 թ. ֆրանսիական բոլոր քաղաքավին և գիւղական համայնքների պարտքը հասնում էր 3.020.000.000 ֆրանկի որից միմիայն Պարիզի մասը կազմում է 1.777.914.586 ֆրանկ:

Խտալական 4925 համայնքներ պարտք ունեին առ լուսար 1886թ.

883.138.464 Փրանկ:

Գերմանական համայնքների պարտքը հասնում էր առ 1890 թ. լուսարը՝ 177.000.000 մարկի: Բացի այդ նոյն նպատակի են ծառալում 17 գերմանական ակցիոներական բանկեր:

Աւստրիակում միմիայն Bodenkreditanstalt'ը փոխատութիւններ է տեսլ առ 91 թիվը 71.592.310 գուլդեն:

Անգլիակում—1886 թվին արձանագրուած էին 28.401 համայնքներ 28 միլիոն բնակիչներով: Սոքա ունեին մուտք 56 միլ. ֆունտ ստերլինգ, ելք մօտ 54 միլ.: Ագդ համայնքների ընդհանուր պարտքն էր 1886 թվին մօտ 182 միլ. ֆունտ ստերլինգ: Վերոլիշեալ թմբից լոնդոն քաղաքին վերաբերում են տարեկան եկամուտ 10 միլիոն ֆունտ և պարտք 38 միլ. ֆունտ: Անգլիական բոլոր համայնքների պարտքը՝ 182 միլ. ֆունտը բաժանում է ալսպէս: պարտք էր արւած ջրանցքների համար մօտ 32 միլ. ֆունտ, նաև անդիմուների—մօտ 29 միլ. ֆ., ճանապարհների հաղորդակցութեան բարելառութեան համար մօտ 28<sup>1</sup>/<sub>2</sub>, միլ. ֆ., օդուտունների համար մօտ 17<sup>3</sup>/<sub>4</sub> միլ. ֆ., դպրոցների համար մօտ 16 միլ. ֆ., գաղափն լուսաւորութեան համար մօտ 14<sup>1</sup>/<sub>2</sub> միլ..

Ա. մերիկակի նահանգները 1880 թվին պարտ էին 234 միլ. գուլար, դքսութիւնները 123 միլ. գուլարու քաղաքները 700 միլ. գուլար, —ընդամենը մօտ 2 միլիարդ ոռոքից: Այդ գումարումն են Վաշինգտոն քաղաքի պարտքը 25 միլ. դոլ., ՆիուՅորկինը 91 միլ., Չիկագօ'ինը 12<sup>1</sup>/<sub>2</sub>, Ֆիլադելֆիա'ինը 57 միլ. գուլար:

Դնենք ալսաեղ մի աղիսակ<sup>1)</sup>, որից կերևակ թէ 1886 թվին ինչ քան պարտքեր ունեին եւրոպական մի քանի քաղաքները և թէ ինչ է ընկնում ամեն մի քնակչին:

<sup>1)</sup>) I. Körösi կազմածը.

Բնակչութիւն քէշ.	Պարուժ գումարը.	Ընդհան է գ բնակչ.
Պարիզ . . . . .	2.237.213	1.768.653.400 Փրանկ 768,55
Բերլին . . . . .	1.349.063	217.730.546 " 161,28
Վիեննա . . . . .	759.066	136.870.704 " 180,21
Միլան . . . . .	361.212	79.585.696 " 220,22
Կոպենհագեն . .	289.000	41.880.037 " 144,91
Ֆրանկֆուրտ . .	156.000	53.813.656 " 344,96
Մայն գետի վրա		
Վենետիկ . . . .	147.347	8.186.926 " 55,56
Գրիմստանիէ . .	134.036	16.614.341 " 123,55

Առանց երկարաբանելու նկատենք, որ եղած փոխառութիւնները  
 $2\frac{1}{2}-4\frac{1}{2}$  առ հարիւրով են եղած, ուրեմն միջին թւով  $3-3\frac{1}{2}\%$ ։  
 Գալով Ռուսաստանի քաղաքներին մենք տեսնում ենք, որ բոլոր  
 805 քաղաքների եկամուտը 1889 թ. եղել է մոտ 58.693.038 ռուբլի, իսկ  
 ելքը=57.677.464 ռուբլի։

Ռուսաստանի հինգ քաղաքների (Պետերբուրգ, Մոսկա, Օդեսա,  
 Վարշավա և Բիդա) ընդհանուր եկամուտը (25.745,000 ռ.) հաւասար է  
 բոլոր քաղաքների գումարի  $0,44\%$ ։

Բոլոր քաղաքների գումագլուխը առ. 1889 թ.=34.006.636 ռ., իսկ  
 պարտքի գումարը էր 34.605.608 ռուբլի։

Դնենք ակտեղ մի փոքրիկ աղիսակ, որից երեսում են Ռուսաստանի  
 գլխաւոր քաղաքների թէ տարեկան եկամուտը, և թէ պարտքը առ.  
 1889 թիւը։

Ալիքնութը	Պարուժ գումարը
Ս. Պետերբուրգ . . . . .	8.102.301 ռ. 2.789.922 ռ.
Մոսկա . . . . .	7.625.975 " 5.877.805 "
Օդեսա . . . . .	3.744.669 " 4.727.466 "
Վարշավա . . . . .	3.573.912 " 6.364.498 "
Բիդա . . . . .	2.791.014 " 1.074.932 "
Կիե夫 . . . . .	1.558.171 " 671.004 "
Վորոնեժ . . . . .	309.387 " 1.010.092 "

Անցնելով ակտմ համականերին՝ պիտի նկատած, որ հոգսերի ծան-  
 րութիւնը Ռուսաստանում դրւած է զեմստօների վրա, քանի որ ժողո-  
 վրդական առողջապահութեան հոգսը ալս վերջիններիս է լանձնւած։  
 Աւ իրաւ, ազգպէս էլ վկալում են թւերը. 1881 թ. համակաների ընդհա-  
 նուր ծախքի 32.185.691 ռ. գումարից մնագոյն մասը ընկնում էր վար-  
 չական ծախքի (административные расходы) բաժնին, ան է 22.517.329 ռ.  
 ի վարձատրութիւն գիւղական կառուվառութեան և միմիան բարելաւու-  
 թեան վրա (содержание сельского управления и расходы по благоустройс-

ԵՎՅ) — 9.668.362 ռ., մնացորդ գումարը հասնում էր դաշտեր չորացնելու, հովիճներ վարձատրելու և ալլ մնացական ծախքերին, ժողովրդական առողջապահութեան վրա ծախսած է 46 նահանգներում միմիայն 989.503 ռ., որի գրեթէ կէսը՝ 392.242 ռ. ծախսել են 12 նահանգներ, ուր չեն մտցրւած զեմստուները:

Գիւղական համանքների ժողովրդական կրթութեան վրա արած ծախքերը = 9,7%/<sub>0</sub>, իսկ զեմստուներինը = 90,3%/<sub>0</sub>.

34 նահանգների զեմստուների եկամուտը 1885 թվին հասնում էր 43 մլլ. ռուբլու, որի 21%/<sub>0</sub> (մօտ 9 մլլ. ռ.) կազմում էին նահանգական տուրքեր և մնացեալ 79%/<sub>0</sub> (մօտ 34 մլլ. ռ.) գաւառական տուրքեր: Ահա աղիւսակը:

Հողերից հարկ	(ըборъ)	28.164.543 ռ.
Քաղաքական անշարժ կալքերից	"	2.334.570 "
Գաւառական բնակչած տներից	"	444.275 "
Գործարաններից և առևտրական հիմն.	"	3.417.975 "
Ալլ կալքերից	"	330.373 "
Առևտրական վկալաթղթերից	"	3.584.391 "
Ալլ եկամուտներ (մաքսեր, տուքանքներ, անշարժ կալքերից, դրամագլխներից և ալլն)	"	2.215.962 "
Մնացորդներ (օստաք և չաշեց)	"	2.878.280 "
Հասովթների գումարը . . .		43.179.733 ռ.

Եթէ աւելացնենք ալս գումարի վրա 14 նահանգների  
(օբласт Յանձնական և Կատարական) հասովթները, որոնք միասին առած կազմում են. . . . = 6.988.662 ռ.  
Նաև Անդրկովկասի և Սիբիրի հասովթները. . . . = 3.670.514 ռ.  
Կը ստանանք մի գումար, որ հաւասար կը լինի. . . . . 53.838.909 ռ.  
Ալս աղիւսակի կից դնենք 1885 թվի ծախքի աղիւսակը, որից  
կը տեսնէի թէ ինչ բանի համար ինչքան է ծախսաւմ:

Տեղական քաղաքակին վարչութեան	վրա	1.496.986 ռ.
Գիւղացիական հաստատութիւնների	"	1.380.591 "
Դատաստանական	"	4.654.135 "
Զեմստուօի վարչութեան	"	4.125.168 "
Подводная повинность <sup>1)</sup>	"	4.618.051 "
Дорожная	"	2.771.860 "

<sup>1)</sup> Տէրունական և ալլ գործերի համար ձիերով սալքերով և ալլն ծառաւելու պարտաւորութիւնը:

<sup>2)</sup> Ճանապարհներ շինելու պարտաւորութիւնը:

Պոտոմայ	<sup>1)</sup>	162.510	ն.
Ժողովրդական տառզապահութեանն և խնամատարութեան	{	11.478.992	ն.
Ժողովրդական լուսաւորութեան		6.831.929	ն.
Զանազան		4.448.079	ն.
Զը նախատեսնեած		988.951	ն.
		43.248.089	ն.

Ակտագիտով զեմստաօները տարեկան ծախսում են մոտ 18 միլ. ռ., ժողովրդական առողջապահութեան և ժողովրդական լուսաւորութեան վրա, Աերին աստիճանի հետաքրքրական է նաև թէ ինչ գումարներից է կազմ. առ 34 նահանգներում զեմստաօների դրամագլուխը Սոցա գումարը առ 1887 թ. համառում էր 73.186.045 ռ., կազմած հետեւալ մասերից:

Նահանգական շտեմարանական դրամագլուխը	14.015.050 ռ.
Դաւառական	1.610.464 ն.
Դիրքական համականքների և մեջան. դասակարգի <sup>2)</sup>	9.558.075 ն.
Բարեկործ. հաստատութիւնների դրամագլուխը	9.340.439 ն.
Ժողովրդական լուսաւորութեան	2.053.498 ն.
Ապահովագրութեան	20.100.221 ն.
Պահաստի՝ չը նախատեսնեած պիտուքների դրամ.	6.678.136 ն.

Աբստեղ մենք կանգ ենք առնում, Եթէ ընթերցողը ինքը համեմատութիւններ անելու լինի՝ ինքը կը նկատի ան մեծ տարբերութիւրը, որ կալ եւրոպական համականքների և քաղաքների եւնմուտքի մէջ՝ համեմատութեամբ Ռուսաստանին վերաբերեալ թւերին, Եւրոպակալում օրէնքը զուգընթաց է եղել կեանքի հետ և հեշտութիւններ է տւել էժանագին վարկի օգնութեամբ բարելաւել քաղաքների և համականքների դրութիւնը. Պարոն Հերցենշտանը, որի գեղեցիկ լոգւածը<sup>3)</sup> նիւթէ է տւել մեր ալս տողերին, առաջարկել է Մոսկվաի Հողակին բանկի ներկալ փետր. 2-ի ակցիոնների ընդհանուր ժողովին՝ տալ երկար և կարճ ժամանակամիջինութիւններ զեմստաօներին, քաղաքներին, համականքներին և հասսարական հաստատութիւններին, զեմստաօներին—մի չափով սական, որը չը գերազանցէր սոցա ելումուտքի (բյուջետъ) 5%։ Պարոնի առաջարկութիւնը ընդունել է նաև Խարկովի Հռազդին բանկը.

<sup>1)</sup> Զինուորներին ընդունելու պարտաւորութիւնը.

<sup>2)</sup> Составно мѣщанскій.

<sup>3)</sup> „Русская Мысль“ 1892 թ. լունիս, չուլիս՝ Кредитъ для земствъ и городовъ».

\*  
\* \*

Ընթերցողները անշուշտ գիտեն նշանաւոր ռուս գրող Գլէր Ուսպենսկու հոգեկան տկարութեան մասին, «Մուլդու-ը ծանօթացրել է արդէն իւր ընթերցողներին ալս հեղինակի Հողի իշխանութեան մասին իւր ընթերցողներին ալս հեղինակի Հողի իշխանութեան մասին ունեցած կարծիքների հետ Ալդ տաղանդաւոր գրողին աւելի ևս լուսաբառնեցած համար—առաջ ենք բերում նրա գրածքներից—որոնք պարզում են նելու համար—առաջ բերում նրա գրածքներից—որոնք պարզում են հեղինակի հակեացքները ռուս մուժիկի վրա և ռուս ինտելիգենցիակի պարցականութիւնների վրա:

—ովհենչ բանի համար է աճում ահա ալս կաղնին, Նրան Բնչ օգուտ հարիւր տարի ծծել հողի հիւթերը Ի՞նչ շահ ունի նա ամեն տարի ծածկ-մել տերեններով, գետու նրանց կորցնելու ու վերջի վերջու խողակաղնով կերակրմալ խողերին, Բոլոր օգուտը և շահը ալդ կաղնու կեանքի իսկապէս նրանում է կալանում, որ նա պարզ ի պարզու աճում է, պարզորէն կանաչում է, հէնց ակնպէս, ինքը չը գիտէ ինչու նոյնն է և հողագործ գիտացու կեանքը. դարնոր աշխատանք—ահա կեանքի շահը, իսկ արդիւնք զրօն:

Գիտացու կեանքը ախպէս որոշելուց ինսու Ուսպենսկին աճում է հետեւալ համեմատութիւնը. սինտելիգենտ պաշտօնեալի կեանքը սակայն ալնքան էլ հեշտ չէ. զուք աշխատում էք մինխարութեան գրասենեակներում կեանքի միջոցներու համար, զուք կատարում էք ձեղ համար մի ապարդիւն գործ... Դուք ալդ աճում էք կեանքի միջոցների համար, իսկ ձեր մասնաւոր անձի համար ալդ ամենը բոլորովին անհարկաւոր բաներ են, Զեղ համար կեանքը ալզ բան է. Սառա Բեռնար<sup>1</sup>), Զեմրիխ<sup>2</sup>), լարդանքներ, պոլիտիկա, ալսինքն մի բոլորովին ուրիշ բան, քան ձեր աշխատանքը. Ձեր երեխալոց, օրինակի համար, պիտի կրթէք (չը փչացնելու համար) ձեր ծառալութեան և հասարակական շահերի ծանօթութիւնից հեռու Դուք աշխատում էք՝ լուսալով մի ինչ որ է արդիւնքի. Մի խօսքով՝ ձեր կեանքը բաժանմել է խամբի, որոնց մէջ չկայ կապակցութիւն, Դեպարտամենտում զուք ալլ էք, քան տանը կամ թատրոնում, իսկ գիւղացի հողագործը ամեն տեղ մին է, նա աշխատում է և ապրում է ալդ իսկ աշխատանքի ինտերեսներով և ալդ իսկ ինտերեսների շրջանում ին քն իրան, առանց վարժապետի կրթում է ենրա երեխան, Զեր կեանքի արդիւնքը, ենթագրենք բանկավին մի հաստ տեսքակ է. իսկ հողագործի բանկավին տեսրակը իւր իսկ հետն է—իւր ուրախութիւնների մէջ եթէ որ պարզ է երկինքը (ՅԵՔ), եթէ որ գարիները լաւ

<sup>1)</sup> Ֆրանսիական դրամատիկական նշանաւոր գերասանունի:

<sup>2)</sup> Նշանաւոր երգչունի:

են բումուսմ Զեզ գրասենեակ է հարկաւոր ձեղ համար, հիւրանոց—հասարակութեան համար, դասատուն—երեխալոց համար, և ամեն տեղ ալ կերպ է մտածում և խօսում և գործում, —մուժիկ հողագործին հարկաւոր է մի խրճիթ, որովհետեւ ամենքը ապրում են մի բանով—հողով ամենքի աշխատանքը մի է—հողագործականը, ամենքը խօսում և գործում են մի բան—այն ինչ որ կը հրամալի անել մալի հողը,

Այս խորհրդածութիւնները Ռւսակենսկին լուսաբանում է հետեւալ տողերում, «Ես խօսում էի անցեալները մի ծեր ծերուի հետ, որը մնացրել ու գործի է դրել իւր որդկերանց, թաղել իւր կնոջը ու հողը լանձնել (գիւղական) հասարակութեանը և որպիշեան գործելու ալ ես որժ չունէր՝ գնացել էր շրջելու սրբատեղերը, և ինչ էր վշում, մտարերում ալի՛, մի սոսով գերեզմանում գտնւող ծերուկը 1812 թ. պատերազմին, կամ մի ալ նշանաւոր անցքի փոխարէն, —հողը և իւր իննըսուն մէրա (չափ) ցանած ցորենը...»

Ամառաւակ վերջն էր և Ռւսակենսկին ու նրա խօսակիցը գիւղի փողոցումն էին նստած՝ երբ որ լսեց զեղվկուհիների ուրախ երգեցողութիւնը աշեմնում ևս բկերը ինչպէս են ճղում—հացը լսւ է եկել Աստուծոյ ողորմութիւնով:

Խակ երբ աւելի զիւ ձակներ լսեցին—ծերուկը աւելացրեց. Արևի կարտոֆիլն էլ Աստուծ լսւ է տել<sup>1)</sup>),

Խօսելով ինտելլիգենցիալի մասին և չը գտնելով գիւղում ախալիոյ մի գործիչ, որը «իւր շարերը կեղտառէր ուրիշի զժբաղգութեան համարու Ռւսակենսկին ասում է. «Մուժիկը, որը սպանումէր իւր կնոջը, որովհետեւ ասայ խանգարում է նրա արտնին անտեսութեանը, որ սա թու էր, աշխատաւոր չէր, ծով էր թերես չար էր—իրաւունք ունէր անտառալին մի արամաբանութեան համաձան և հետեւ ապէս իրան մեղաւոր էլ չէր զգում (սպանութեան գործում), Բայց թէ ինչով է մեղաւօր սպանածը որ ինքը թու է, հիւանդ է, բարուապէս զժբաղզ է և ալին Ահա ալս մէկ ոչ կենդանաբանական, ոչ անտառալին, ալլ աստուծալին ճշմարտութիւնն էր մացնում ժողովրդի միջնավակը ժողովրդում է ողովրդական ինտելլիգենցիան, նա սոսքի էր կանգնեցնում թուլին... նա միշտ օգնում էր և գործով ալս կենդանաբանական ճշմարտութեան չափից զուրս բուռն հոսանքի առաջ, նա թու չէր տալիս նրա ընդարձակ տարածման և արգելքներ էր գնուր նրա առաջ... և Ռւսակենսկին ալլ ինտելլիգենցիալի տիպարը տեսնում է ժողովրդական Եօջի յցօնութեան մէջ—տիպար, որը «իրաւ է հրաժարում է աշխարհական հոգսերից, բայց ապրում է աշխարհքի համար, և ոչ թէ թաղ-

<sup>1)</sup> Երես 609—610, հատոր II.

ում անտառների խորքերում ու մի սին բարձրանում ու վրան երևում տարիներ նստած մնում (1):

Մի ուրիշ տեղ (2) խօսելով ժամանակակից ինտելիգենցիալի մասին, Ուսպենսկին ասում է «Զգիտում արդիօք ինտելիգենտ մարզը (ալսինքն ինտելիգենտ նպատակների մարզը և ոչ թէ ինտելիգենտ պաշտոններում վարձով ծառակող մէկը) շուտ ձեռք կը բերի զիւղի համար ոչ լոկ հացի մասին հող տանելու իրաւուքը, Այս ճրա պարտականութիւնն է և ուստի ինտելիգենտ մարզը չունի ուրիշ պարտաւորութիւնն, Անկասկած է որ առաջ նա ալդ իրաւուքը պիտի ձեռք բերի և իւր անձի համարու..»

«Մի ուստի գրող, որի կարծիքին ես համամիտ եմ, բնորոշում է ինտելիգենտ և կուլտուրական մարդկերանց միջն եղած տարբերութիւնը իրեն տարբերութիւն խսկական և կեղծ անդամանդերի մէջ, նաև շինծու անդամանդը կարող է հաջարներ արժենալ և առ երես ովհնչով պակաս չը մինել խսկականից—բայց թէ միան առ երես կարելի է տէր լինել ինտելիգենտ մարդու բոլոր գեղեցիկ լատկութիւններին և մինենոն ժամանակ զուրկ լինել ալդ անկեղծ լատկութիւնների պահանջըլքից, արխինքն կարելի է ունենալ կոպիտ վայրենի սիրու, որը իրան որսալ է տալիս (հնթարկում է) ամեն մի անճշմարտութեան և մինենոն ժամանակ կուլտուրական սովորութիւնների, կուլտուրական վարժութիւնների ազգեցութեան տակ—երեսալ լախն ու անկեղծ սրախ տէր մարդու ինտելիգենտ մարդը, ընդհակառակը սրտի անկեղծութեան սորովն է, մի մարդ որի մէջ ձգտումի տաեր անգամ չի լինի մնդմացնել, հանգամանքներին չարմարացնել կամ ալսպէս ասած խելքի բերել իւր անկեղծութիւնը և ալդ պատճառով ալս ու ախ զաղափարով լափշտակած, նա չի կարող ետ կանգնել առանց վախճանի հասցնելու ալդ զաղափարի հետեղողական (ոօօլնծօվատելինի) մշակութիւնը, թէկուզ ալդ զախճանը լինի մահ կամ մի ահազին անձնական դժբաղդութիւն և ալլոն (3):

Եւ նշանաւոր ուստի գրողի ներկաէ անմխիթար գրութիւնը թերեա արդիւնք լինի իւր անկեղծ ինտելիգենտ զգացումների և մտածմունքների, որոնց նա կամեցնել է մնալ հաւատարիմ և հետեղողական նաև կեանքի մէջ,

\* \*

Իուս լիզով նոր լուս տեսած գրքերից արձանագրենք՝

1) Բարուականութեան առաջադիմութիւնը, թարգմանութիւն Լեառունութիւն (L'évolution de la morale), Գինը 2 ոռոգիւ, Ապագալ էթիկավ.

1) Էջ 613, Հատոր Ա:

2) Էջ 727, " Ա:

3) Հատոր Ա. Էջ 1058, ծանօթութեան մէջ.

նպատակը, առաւմ է հեղինակը, պիտի լինի բացառապէս կանոնների բահաձևնելը (Փօրմուլորեա) և ալճախի հակումների ստեղծելը, որոնք համապատասխան լինին հասարակական և անհատական երջանկութեան քանակութեան գումարին, ասինքն ձգում՝ մարդու զարձնել Փիզիկապէս աւելի ուժեղ, բարուապէս աւելի կատարեալ և մոռաւրապէս աւելի զարգացած: Լգայ ժամանակ երբ անհատական ու ընտանիկան եսասիրութիւնը տեղ կտաէ հոգատարութեան հասարակութեան մասին, երբ միենուն ժամանակ ամեն ոք կապրի լի անփոփ կեանքով, ազատ զարգանալով բնութեամբ որոշած ասհմաններում:

2) Պարսկական նամակներ (*Lettres persanes*) թարգ. Մոնտեսկիո՛ից. Դինը 2 ու 50 կ.՝ Առ 200 տարի սրանից առաջ թեթև ոճով դրամ թունալի ալս ծաղրը չի կորցրել նաև ալժմո իւր հետաքրքրութիւնը:

Նշանաւոր մոտածով մտքերից առաջ թերենք մի քանիսը:

— Ի բաւ է արգեօք որ կանալք ստորադրւած են ողամարդկանց բնութեան օրէնքների համեմատ:

— Ոչ, բնութիւնը երբէք չի սահմանել ալդպիսի օրէնք. մեր բոնակալութիւնը կանանց վրա—ըսկ բան գթիւն է.

— Ո՞ր կառավարութիւնն է ամենասմելացին:

— Եթէ մի պիտութեան մէջ մեզմ կառավարութեան չնորդիւ բնակիչները նույնքան հանգիստ են, որքան որ մի ուրիշ երկրում, ուր կառավարութիւնը խստապահանջ է, առաջնը նախաղասելի է:

— Այն երկիրներում, ուր պատիճները միշնակարգ են—սրանցից աւելի չեն վախենում քան ուր որ նորա աւելի անալի և աւելի սարսափելի են:

3) Երնելի մարդկանց կենսագրութիւնները. Հրատարակութիւնները. Պաւլինկովին. Նոր լուս են ընծալած՝ Սպեռանսկու, Կատկովի, Զիորդանո Բրունո՛ի, Միլլի, Դլադուսնի, Բոմարշէ՛ի, Բերանժէ՛ի և Մէկերբերի կենսագրութիւնները:

4) Պատմ. թիւն ժամանակակից գրականութեան Ապանիալում Հիւբրարի, գինը է 2 ոռուրի:

5) Ժաղովածու. Խուասաստանի օտար պետութիւնների հետ կապած զաշնադրութեանց և պալմանադրութեանց՝ պրոֆ. Մարտենսի, հատոր 1710—1801 թիւր:

6) Մառարուծութեան մասին. կազմոց Պետրոսեան ակադեմիակի պրոֆ. Տուրովին, գինը 5 կոպէկ:

7) Հեղինակի իրաւունքը—Գ. Շերշենեւիչ. Գրքի հեղինակը մէջ է ընընկալ թէ բազմաթիւ ոռու դրազների կարծիքները և թէ մօտ 50 օտար գրողներինը ալս խնդրի առիթով թէ առհասարակ հեղինակի իրաւունքը պիտի լինի՝ մշտենչենաւոր, ժամանակաւոր, թէ կապւած հեղինակի կնանքի:

Պ. Շերշենեւիչի կարծիքով հեղինակի իրաւունքը ունի գուքի իրաւունքի բնաւորութիւն, իսկ ժամանակամիջոցի համար հեղինակի մանւանից ինտու 50 տարին շատ ու շատ բաւական է համարում:

8) Մի տարի Ամերիկակում. Կին—բժշկի իշողութիւններից. Ա. Ն. Պանսկալա: